



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 317 - Ա

23 օգոստոսի 2019 թ.

**ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 164-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արթուր Ղազարյանի դիմումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Ղազարյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ից հոկտեմբերի 3-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի սեպտեմբերի 2-ից հոկտեմբերի 3-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճադրյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Անահիտ Սարգսյանի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հոկտեմբերի 4-ից:



23.08.2019

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ

✓